

Չափաւոր պահեցողութիւնը յարատե-  
 ւեց մեր ազնուական դասին մէջ մինչեւ  
 Փ դար, ուր հին կամաւոր խստութիւնը  
 տակաւ ընդհանրանալով՝ կ'ընդհարէր ա-  
 նոր հետ, եւ անգիտարար բամբասել կու  
 տար զայն: Ասողիկ կը պատմէ՝ թէ «սո-  
 վորութեամբ անկարգութիւն էր... իշխա-  
 նաց եւ ազատաց՝ որովայնամոլութեամբ  
 ապականել» չորեքշաբաթի, ուրբաթու եւ  
 եօթնօրեայ պահքերը, «բաց ի մտոյ՝ կրե-  
 դէն կերակրովք». այս էր զայթակեցու-  
 ցիչը: Կարուց Աբաս թագաւորը ջանաց  
 ուղղել զայդ իւր իսկ օրինակով, հրա-  
 ժարելով կթեղէն ու ձկնեղէն ուտեստնե-  
 րէ, եւ բաւականանալով «հացիւ եւ բան-  
 ջարեղէն մրգօք», ինչ որ կը համարի  
 «օրինաւորեալս կանոնիւ» (197): Արդա-  
 բեւ այդ շրջանին կը վերնան կթեղէնք  
 եւ այլ եւս չեն յիշուիր. այնպէս որ Նա-  
 բեկացին կը պայքարէր լոկ «ձկամբ եւ  
 գիւնով եւ ձիւրով» լուծելու սովորութեան  
 դէմ՝ որ կը տեւէր. եւ որուն կը պատաս-  
 խանէին լուծողները՝ թէ «հրաժարեցու-  
 ցեալ կերակուր՝ միս է եւ որ ինչ ի մը-  
 սոյ», եւ ոչ այլ ինչ (518-9): Խստա-  
 պահից իղձերն ապարդիւն մնացին, որով  
 աւելի քան դար մը վերջ Տարօնացին  
 դեռ կը տեսնէր հնոյն շարունակութիւնը,